


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆՆԱԿՆԵՐԸ ԲԱԾ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ ԱՌՋԵՒՑ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 44

ՆՈՒ ԵՈՐՔ, ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 10, 1898

ԳԻՆ 3 ԱՆՆԹ

ՁԷՑԹՈՒՆ

Այն անվանները Մայրը, որուն քաղաքի գաւառներու կենաց արևն իսկ մեզ համար կը փայլի, իւր կարիճներով միտանի...

Անկերկուղ, լայնակուրծք, վեհ ու հպարտ զէյթունցիին ակամայ խոնարհած է: Երկնոտ թագուհի—մուրացիկանի մը պէս—անվարժ ու գող-գողացող ձեռքը երկնցուցած է իւր հեռաւոր գաւառներուն ու... հաց կը մուրայ:

Ձէյթունի բարձրարեւմ ժայռոտ գլուխը, որ սոսմանան թնդանօթներու ուռմբերուն առջև աննկուն, անընկճելի կեցած էր, կը խոնարհի աւելի անկողնու գորաւոր թշնամիի մը առջև...

Ինչ որ Բրուսի թնդանօթը անկարող եղաւ ընելու, լղրճուկ սասմաբար կ'ընէ:

Ձէյթունը չ'յաղթուիր... բայց Ձէյթունը կ'անօթենայ...:

Ձէյթունցին միշտ կուտած է. բայց երկու անգամ անօթեցած է. ասորինք առաջ ալ հաց ինչքան կ'Պօլոյ էֆէնայիննէն. հայ էֆէնայիննէն մէկ հատը օգնեց անոր... դաւաճանութիւնով Ձէյթունի սրտին վրայ հաստակեց թրքական հսկայ գորանոց մը, և տղրուկ զինուորները սկսան ծծել զէյթունցիի երակներու մէջէն անոր արիւնն ալ:

Նուրան էֆէնայի տոկալի գաւառ տեսաւ լեռի գաւառը, ու բարկութիւնն իր անօթեցած է. ասոր թէ էք շ'անօթեցաւ, և մինչև վերջն ալ կուտեցաւ նորաչէն գորանոցին դէմ, տղրուկներէն քանինքը քաշեց փրցուց իւր կուրծքէն և հատիկ հատիկ ընդվզեց զանոքը:

Վերջին կրիւնն ու պաշտպանութիւնն յետոյ՝ Ձէյթունը նորէն անօթեցած է. այս անգամ ասոր աշխարհներու մէջ ապրող իւր գաւառներէն կտոր մը հաց կ'ուղէ ան: Տասնեակ տարիներ ի վեր լուստազարդ սրահներու մէջ «Դու զով խնդրես»ը երգողներու նայինք այնքան քարսիրտ պիտի ըլլանք որ շերտ մը հաց չը գնենք աշխարհիս ամենաքաջ մարդերու ձեռքին մէջ, որոնց հետ մօտ ազգական ըլլալու պատիւը և փափաքը կը վայելենք:

Պօսթոնէն Պ. Փափազեան առաջարկած է արդէն ի նպատակ զէյթունցիի հացեղին հանգանակութիւն մը սկսուի, ու սկսած է արդէն:

Երկմտողներուն և աւարկողներուն համար ըսելու է թէ՛ Փափազեանը և ՏԻԳՐԻՍԸ չեն որ դրամ կ'ուզեն, ամենուս Ձէյթունն է որ անօթի է, ան է որ կ'ընէ հանգանակութիւնը. եթէ անտարբեր մնանք՝ զէյթունցիին է որ ըսած պիտի ըլլանք լուսթեամբ.— «Գնա՛ մեռիր»: Թ. Չ.

Հանգանակութեան երկրորդ ցանկը՝ տեղոյ անձկութեան պատճառաւ՝ կը հրատարակենք գալող շարթու: Մանչէսթըրէն կարևոր թղթակցութիւն մը ստացանք վերջի պահուս որ տեղոյն մէջ ի նպատակ Ձէյթունի բացուած հանգանակութեան մասին կարևոր լուրեր կը հաղորդէ:

ՀԱՅ ԿԱՄԱՐՈՐՆԵՐԸ

Մեր Ուսթըրի թղթակցը կը գրէ. «Անցեալ շաբթու Ուսթըրի կամաւոր զօրաց հետ վերադարձան երկու հայ կամաւորներ, ձօրձ Մարթին և Տիգրան Պաղտասարեան. առաջինը Սանթիակայի անկողնու ճակատամարտին մասնակցած էր, ասոր առողջութիւնը և զուարթութիւնը տեղական մամուլի ուշադրութիւնը գրաւեց, վասնզի տեղացի կամաւորք գրեթէ ամենքն ալ տօգուեան և կ'ախք էին դարձած: Սակայն ցաւալի է ըսել թէ տեղացիներէ ո՛չ ոք գիտցաւ թէ ձօրձ Մարթին հայու գաւառ էր, զի ձօրձ Հայ կոչուիլն իրեն համար պատիւ չի սեպեր: Երկրորդը՝ Տիգրան Պաղտասարեան թնդանօթաձիգ զօրաց խմբին միացած էր. այս վերջինը ձօրձ Մարթին չափ բազում չէր, զի պատերազմին մասնակցած չէր, այլ իւր բանակատեղին մնացած էր՝ անհամբեր հրամանի մը սպասելով: Պ. Տիգրան Հատ մը գանգատներ ունի իր զօրապետայ դէմ, որոնք անգըթօրէն կը շարձարեն եղբր զիրենք՝ փայտ կտորել և ուրիշ այլևայլ ծանր գործեր ընել առողջ: Փրկելով անօթի և անհանգիստ կեանք անցընելը սովորական դարձած է եղբր:»

—Ձիքամօկայ բանակող 12րդ զօրաբանակի հայ անդամներն Տ. Լեոն Հարընեան արկածով մը ձախ ձեռքը վերաւորած ըլլալով՝ մէկ ամիս արձակուրդով քաղաքս եկաւ: Հայ զինուորք, որ հսկայ կազմուածք մը ունի՝ շաբթուս մէջ կը մեկնի բանակատեղին ետխալու: Պ. Լեոն ինչպէս նաև իւր ընկերներէ կարապետ Մանուկեան նշանաձգութեան մէջ յաջող լինելով՝ պատուանշաններ ըստացած են:

—Ձօր. Լիի հրամանատարութեան տակ գտնուող զօրաբանակի Հայ կամաւորներէն Պ. Պետրոս Չանգալեան գլխեր ատեն փախլի փորձող դատաւրէ մը ձեռքազրկած ըլլալուն համար բանակին մէջ մեծ համբաւ ստացած է: Այս այն երիտասարդն է որ, Փաթըրանի մէջ, արագընթացութեան մրցման մէջ քանիցս առաջին մրցանակ շահած է. ասոր եղբայրը Գէորգ, որ նոյն բանակի մէջ կը ծառայէ, իւր վերադաս պաշտօնէից համակրանքը յաջողած է գրաւել՝ իր ցոյց սուած յանգընութեանց համար:

—Պատահական թղթակցի մը մեզ կը հաղորդէ հետեւեալը որոյ մանրամասնութիւնը հասած չեն դեռ. Ձեր հաւանորներու մէջ կին մէջ ծառայող Հայ թնդանօթաձիգ մը ուսթըրի թեան ժամանակ, եօթն անգամ շարունակ նշանակէտին զարկած ու մեծ տեք պատճառով ըլլալուն համար, պատուանշան ստացած է: Մովակալը այս սոթիւ ըսած է եղբր Հայ նաւազին. «Բանի որ Հայք այսպիսի գաւառներ կը ծնին, արժանի են արագութեան»:

—Տըթ. Իշխանեան, որ իբր կամաւոր թիկն բանակին ընկերացած էր քաղաքս, վերադարձաւ անցեալ օր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Երիտասարդ Չարը անցեալները ընդհանուր խաղաղութեան ձիթենիի ճիւղը երկնցուց ընդհանուր աշխարհի: Կարծողներ եղան թէ Չարը իւր մեծ հպատակ թօլօթոյի փիլիսոփայութիւններէն ազդուած՝ անկեղծութեամբ նետուեցաւ հրապարակ, բայց շատեր ալ հաւատացին թէ կեղծ դիւանագիտութեան գիմակը երեսին անցուցած՝ Չարն երբ այդ ոտը մէկ ձեռքով ցոյց տուաւ. Երուպայի, միւս ձեռքին մէջ ամենէն նոր հրացանը ունէր:

Անգլիոյ ծերունի թագուհին հեզնող ժպտով մը «օլրայթ» ըսաւ Չարին ու ամենահեզ, արիւնուոշտ պատերազմը վերջերս առաջ տարաւ Ափրիկէի խորքը: Անկո-եգիպտական բանակը յարձակեցաւ անցեալ օր Քարթումի (Սուտան) վրայ, անխնայ ջարդեց անթիւ ընկերներ, ու անգլիական զօրակը այսօր կը ծածանի Սուտանի մայրաքաղաքին վրայ:

Վիլհելմ կայսրն ալ իւր աղբարիկի քիթին խնդայ և գնաց միացաւ պատերազմի մէջ եղող Անգլիական կառավարութեան հետ: Լօնտոնի գերմանական դեսպանը և Լորտ Սոլիսպիթի մէկ շաբթու առաջ դաշնագրութիւն մը ստորագրեցին, որու զօրութեամբ Անգլիա Գերմանիոյ կը ձգէ Սուլթանի ճակատադիրը. ամբողջ Փոքր Ասիոյ պաշտպանութիւնը Վիլհելմի կառավարութեան կը թողուի: Վիլհելմն ալ կը խոստանայ Անգլիոյ կատարեալ շէջողութիւն և մէկ կուսացում Տանկուլի և Սուտանի մէջ, սրպէս զի Անգլիա ուզածին պէս ջարդէ ընկերներ և տիրանայ ընդարձակած աւալ երկրներուն:

Կրէտէն նորէն կրակներու մէջ է. Բանտիա քաղաքը բոցերով շրջապատուած է, բայց այս անգամ արիւնայեղութիւնը անգլիական զորատուններու ու թուրք ամբոխին և կառավարութեան մէջ չէ, այլ թուրք վայրենի խուժանն ու կառավարութիւնն է որը կը ջարդեն... անգլիական զօրքերը:

Վերջերս թուրքերը ակունին կը կրճտեցնէին երբ կը տեսնէին թէ Երուպական միացեալ կառավարութիւնները, որոնք իբր ստիկաններ կ'ըսպասէին կրէտէի մէջ, սկսած էին տեղական պաշտօններու մէջ զետեղել թրիստոնեաներ ալ: Թուրքերուն համար անտանելի էր այս. և փոխանակ այս անգամ կրէտացիներ մորթելու, փորձեցին բուն շարիքը բառնալ, և ուժերնին փորձեցին անգլիական պահապան զինուորներու վրայ. անոնցմէ քանինքը ջարդած են, կ'ըսուի թէ անգլիական հիւպատոսը ըսպանեց են: Թուրքերը դուրս կը վերադառնան զուրաշէն եկող կեանքները, որպէս զի ներսինները դիւրութեամբ կրնան լինցնել:

Անգլիական մարտանաւ մը կրակեր է Բանտիան, որն մասամբ այ-

րած է. ուրիշ տէրութիւններու մարտանաւեր ալ փութացած են Բանտիա:

Պրանսայի մէջ Տրէյֆուզի անվերջ պատերազմը նորէն պայթեցաւ շաբթուս՝ աւելի ողբերգական կերպով: Չարլի «Փախուստէն» իվեր հակառէյֆուզականները ուժովցած էին ու կը պօռային թէ Հայրենիքի «դաւաճան»ի պաշտպանը չ'կրնալով արդարացնել ինքզինքը և դաւաճանը՝ կծիկը դրաւ Պրանսայէն: Բայց այս շաբթու աշխարհին պարզուեցաւ թէ Սատանայի կղզիին մէջ տառապողը և մեծ վիպասանը են ճշմարիտ Փրանսացիները, և ամբոխի մէկ տգէտ մասն է դաւաճանը որ կայրօրէն կը հարածէ ճշմարտութիւն փնտռողները:

Շարթուս մէջ գնդապետ Հէյրի պատերազմական նախարարին առջև խոստովանեցաւ թէ Տրէյֆուզը դատաւարտող գրութիւններէն մէկը ինքը պատրաստած էր: Նախարարը սարսափեցաւ: Գնդապետն անմիջապէս ձեռքազրկուեցաւ ու ժամ մը վերջ՝ բանտին մէջ անձնասպան եղաւ: Ամբողջ Պրանսա յուզման մէջ է: Սատանայի կղզիի բանտարկեալին անմեղութիւնը կը յայտարարուի: Ամբողջ բուռն զայրոյթով լեցուած է կառավարութեան դէմ: Այս զայրութիւն մեծ ու արիւնոտ յեղափոխութեան մը պայթումին նախանշանն ըլլալը կը վախցուի:


Պաղլի մէջ անցեալները Սիօնի ընկերութեան համաժողովը տեղի ունեցաւ. աշխարհիս ամեն կողմերէն ներկայացուցիչներ եկած էին ժողովին, որուն նպատակն է որ և է միջոցով Պաղեստինը կրկին Արաբաւոր գաւառներուն հայրենիքը ընել: Մեծահարուստ հրէաները 10 միլիոն տոլարի դրամազուլուս մը հանգանակեցին, որով դրամատուն մը պիտի հաստատեն ընկերութեան օգնելու նպատակով:

Սուլթան Համիտը «Համակրանաց» հեռագիր մը տուաւ ընկերութեան համաժողովին, թերև 10 միլիոն դրամազուլուսն օգտուելու յոյսով:

Վերջի հեռագիրներ ծանրակշիռ լուրեր կը բերեն կրէտէն: Անգլիական զօրքերն, թուրք զօրքերն, Գերմանական, Ամերիկեան և Անգլիական հիւպատոսարաններն այրած ու վերջնայ շէնքին մէջ հրոյ զոհ գնացած է անգլիական փոխ հիւպատոսն: Էտհէմ փաշայ հարցման մը պատասխանելով ըսած է թէ՛ ինք անկարող է ժողովրդեան կատաղութիւնն զսպել. բայց կղզիի կառավարիչն պատասխանատու կը նկատուի այս բոլոր շարեաց:

Ահաւասիկ Չարի խաղաղութեան առաջարկին նոր պատասխան մ'ալ:

Լի Հընկ Չանկ, Պրանսայի նախարարապետն պաշտօնազուրկ եղաւ նորէն, կըսուի թէ անգլիական շահուց հակառակ գործելուն համար:



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ
Կը Հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԻԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻՆՏԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Table with 4 columns: Գրքի անուն, Տի. Սթ., Տարեկան, 10 Փրանք. Գրքի անուն, Տարեկան, 10 Փրանք.

Մտար կամ նամակ ուղղել Հետեւեալ Հասցէին
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՐԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 10 1898.

ԴՐՈՇԱԿԸ ԶՐՊԱՐՏԻՉ ՄԸ ՉԷ՝

Արժիւարի խնդրոյն առթիւ Փափազեանի անցեալ շաբաթուայ ՏԻԳՐԻՍԻ մէջ Հրատարակուած բուն յօդուածին պատասխանելէ առաջ՝ պէտք է անոր վերնագրին պատասխանել:

Նախորդ և ներկայ Հնչակեաններու Ամերիկայի ծանօթ անդամը Հարցական ձևի մը տակ կը հարցնէ թէ «Դրօշակ Զրպարտիչ մ'է»: Փափազեան Հաստատական ձևով պիտի գծէր վերնագիրը եթէ պերճախօսութեան սիրահար մը չ'ըլլար: Ինքն ալ շատ լաւ գիտէ թէ այս տեսակ «Հարցականներ» շատ անգամ Հաստատականներ են:

Իմ բացասական վերնագիրը այնքան որոշ բացասական է, որքան Պ. Փափազեանի Հարցականը Հաստատական է: Դաշնակցութեան Օսկանը ինքնիրեն զրպարտող մը չ'ըլլար, որովհետեւ ինքնիրեն գոյութիւն չունի: Դրօշակը Դաշնակցութեան ճշմարիտ օսկանն է: Ինչ որ Դաշնակցութիւնը կը կարծէ, կը հաւատայ ու կը քարոզէ, Դրօշակին էջերուն մէջ կը պարզուին: Խմբագիր կամ խմբագրութիւն չեն որ իրենց անհատական կարծիքը, խորհուրդները և համոզումները կը լինեն ժընէվի թերթին մէջ, այլ Դաշնակցական կուսակցութիւնն է որ կը խմբագրէ իր բերանը եղող թերթը: Կուսակցութեան կողմէ վարձուած անհատներ են անոր խմբագիրները: Այլ շատ պարզ է. անանկ չէ՞ Պ. Փափազեան, որ եթէ իրօք զրպարտիչ մը կայ, այն ալ ամբողջ Դաշնակցական զօրաւոր կուսակցութիւնն է, և Հետեւաբար ձեր Հարցումը պէտք է ուղղէք ամբողջ կուսակցութեան, որն իւր Կ. Պոլսոյ զօրաւոր եւ վստահելի կոմիտէի որոշումին և վճռին վրայ կը ճանչնայ Հայրենիքի խմբագիրը գաւաճան մը:

Պ. Փափազեան կը թուի թէ Մարտի չափով կը շարժէ Դրօշակն ալ. և կը կարծէ թէ վերջինը գոյութիւն ու կարծիք ունի՝ անշատ կուսակցութեանէն, և բերանն է գայն խմբագրողներուն, ինչպէս որ առաջինը այնպէս է, մասնաւոր վերջերս երբ տեսնուեցաւ թէ Մարտը ճանկիւղի և Հրանտի մասին բաներ գրեց, որք երբէք և երբէք ոչ նորակազմ Հնչակեաններու և ոչ ալ նոյն իսկ Պ. Փափազեանի կարծիքները ու համոզումներն էին: Բայց Մարտը գրեց այս պարագային մէջ. նոր Հնչակեան օսկանը կրնայ զրպարտիչ մը ըլլալ երբ իւր կուսակցութեան ամբողջութեան դաւանանքն չէ որ կը պարզէ, բայց Դրօշակ երբէք զրպարտիչ մը չ'ըլլար երբ իւր կուսակցութեան թարգմանը կ'ըլլայ: Այս մասին այսչափ:

Պ. Փափազեանի Համբերութիւնը մանանխի Հատի չափ չէ կ'երևի, երբ կը գրէ թէ «Արժիւար ճակատաբաց Հրատարակ կուսակցութեան պատուոյ տեսան կը պահանջէ՝ յանձն առնելով մահուամբ պատժուիլ՝ երբ յանցաւոր դատուի: Ամբաստանիչները խոյս կուտան, ոչ սօցումունեւորով կը Հաստատեն, և ոչ պատուոյ տեսանին կը մօտենան:»

Երբ կազմուեցաւ պատուոյ տեսանը, որուն մօտենալ չեն ուզեր Դաշնակցականները: Կազմեցէ՛ք տեսանը, ու հրաւերը զրկեցէ՛ք տեսանը իրօք մինչև Արաքսայ կը փախչի՞ն Դաշնակցականները այդ տեսանէն:

ԴԱՇՆԱԿԱՅԻՆ ՄԸ

ՆԻՒ ԵՈՐԻ Զ. ԲԱՐԵԳՐՈՒԹԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՂՄԷ ՊԱՏԱՍՈՒՆ ՄԸ

ՏԻԳՐԻՍԻ թիւ 39ի մէջ սկսուած և 41 ու 42ի մէջ շարունակուած քննադատութիւն մը կարգացուեցաւ քաղաքիս Հայոց Բարեգործական Ընկերութեան դէմ, զոր յօդուածագիրը «Քայքայեալ» և «Հոգեվար» վիճակի մէջ ին-

կած կը հռչակէ գոհունակ շեշտով մը: Ոճէն և ոգիէն կը կարծենք կարենալ գուշակել թէ այդ յօդուած այն անձէ կ'ուզայ որ Գործադիր Ժողովոյ անդամ ըլլալու փափաք յայտնէր էր գրաւոր կերպով, և երբ յուսարար եղաւ, յայտարարեց Հրատարակութիւնը պիտի աշխատէր կործանել այս Ընկերութիւնը:

Ընկերութեան Գործադիր Ժողովոյ անդամներէն եւ խնամակալներէն ոմանք օգտօնութեան Համար բացակայ են քաղաքէս. երբ մօտերս վերադառնալու ըլլան, Գործադիր Ժողովոյ իւր Հաշիւն և տեղեկագիրը պիտի ներկայացնէ խնամակալներու Ժողովին, և սա պիտի տեղեկագրէ կանոնաւոր անդամոց ընդհանուր Ժողովին. այն տեսն պիտի իմանայ Ժողովուրդը թէ ՏԻԳՐԻՍԻ քննադատութիւններն անհիմն են և անտեղի: Բայց որպէս զի մինչև այն տեսն սխալ տպաւորութեան ներքեւ չ'մնայ Հաստատութեան միտքը, այժմէն ի դէպ կը համարինք Հետեւեալ կարճ պատասխանները տալ:

Նախ. Ընտրական զեղծումներ տեղի ունեցած չեն, ինչպէս կ'ենթադրէ քննադատը: Թէ Գործադիր Ժողովոյ սկզբնական ընտրութիւնը և թէ պակասաւ անդամոց ընտրութիւնը ճշգիւր Համաձայն եղած են ընդհանուր Ժողովոյ կողմէն քուէարկութեամբ ընդունուած որոշումներուն:

Երկրորդ. Զրպարտութիւն է ըսել թէ գործադիր Ժողովոյ «խղճիմօք» չէ մատակարարած Հանգանակեալ գումարը: Ինչ օգնութիւն որ ըրած ենք, միշտ վստահելի և պատուաւոր անձերու կողմէ մանաւորապէս յանձնարարուած կարօտեալներու ըրած ենք, որոց ընկալաբերները ինչպէս նոս յանձնարարողաց անունները՝ իւրաքանչիւր դէպքի Համար արձանագրուած են տոմարին մէջ: Ոմանց միայն փոքր գումարներ փոխ տրուելով՝ փոխարէն տոմարներ տանուած են: Երկու յոյժ կարօտեալ ընտանեացի \$2.75 ական տղարի անուի տրուած է, պատուաւոր երկու ազգայնոց յանձնարարութեամբ և Ժողովոյ անդամոց միայն անձամբ տեսած ըլլալէն ետեւ: Գալով այն կէտին թէ ձեր զիտն եկող կարօտեացի չենք օգնած, պէտք է ըսելք թէ յայդ մէջ վարուած չենք կամայական կերպով, այլ Հետեւեալ ենք խնամակալաց և ընկերութեան պատուաւոր անդամոց կողմէ մեզի տրուած հրահանգին, որ ընկերութեան նպատակին ևս Համաձայն է, այսինքն մեր մատակարարութիւնը չ'տարածել Նիւ Եորքէ դուրս նահանգներու վրայ: Նիւ ձեր իրօք սահմանակից նահանգ մ'է մերինին, բայց վերջապէս Նիւ Եորք չէ, և չենք կրնար մեզի տրուած սահմանը անցնել: Ոտքերը վերմակիդ շափովը երկնցուր» կ'ըսէ իմաստուն առածը: Երանի թէ մեր վերմակի շափերը ներքին տարածել մեր օգնութեան ձեռքերը բոլոր Միացեալ Նահանգաց վրայ: Դժբաղդարար մեր սահմանափակ միջոցները բուն քաղաքիս մէջ, մեր աչքերուն առջև տառապողներուն միայն փոքր մէկ մասին ներկայութիւնները թեթեւեղութեամբ և պիտայք Հոգալու Հազիւ թոյլ կուտան: Կը զարմանանք որ մեր քննադատին կողմէ մեզի յանցանք կը համարուի այսպիսի սահման մը յարգելիս, որ պարագայից ուժով և խնամակալաց իրատու մեզի տրուած է:

Իրաւ է թէ խեղճ ընտանիք մը Բալիֆօրնիա երթալուն ճանապարհածախս Հայթայթուած է, բայց քննադատը կը մոռնայ թէ ասիկա Բարեգործական Ընկերութեան իւրն է գանձէն չէ Հոգացուած, այլ մանաւոր Հանգանակութեան մը արդիւնքն է եղած, և ան ալ ընկերութեան Հրատարակարի Հանգանակութիւնն ըլլալէն առաջ:

Երրորդ. Ընկերութեան գանձին մէջ ներկայ գրած չ'ըլլալն չի ցուցնէր անոր անոր «Քայքայուիլ» կամ «Հոգեվար» վիճակի մը մէջ ըլլալն: Դրամը գործածուած է կարօտեացի Համար: Զմարտի չէ ՏԻԳՐԻՍԻ ըսածը թէ «յոյս ալ չիկայ» գրած ընդունելու գանձին մէջ: Կան ազգայիններ որոնք մօտ օրերս պիտի Հաստուցանեն իրենց խոստացած նուէրներն: Սակայն այս գրամներն ալ պիտի բարձրանան, և գանձին մէջ նորէն գրամ չի պիտի մնայ, երբ գործադիր Ժողովը տեսնէ Հայ կարօտեացի վիճակը կը պահանջէ գանձին պարպուիլը: Ընկերութեան գանձը ոչ պանգա մ'է և ոչ ալ վաճառատուն մը, որ շարունակ գրամագրուի պահէ:

Զորրորդ. Բննադատին կողմէ ձրի ենթադրութիւն է և այն թէ՛ Տ. Գիւլպէնեան չէ վճարած իւր 100 տոյարի նուէրը գոգնած ըլլալով գործադիր Ժողովէս: Յիշեալ մեծապատիւ Հայրենակիցը յանկարծ մեկնեցաւ այս երկրէն քանի մը ամիսներ առաջ, և անտարակոյս իւր խոստումը պիտի կատարէ երբ վերադառնայ մօտերս: Մեր քննադատը ի՞նչպէս կրցած է մարդարեանալ թէ Հետուս գտնուող մեր Համակրողին կարծիքը փոխուած է կամ սիրտը պաղած է ընկերութեան: Այս կէտը ինքնին բաւական է մեր Ժողովը իրօքնող մասին ցոյց տալու թէ մեր քննադատը որպիսի մարդարե է և ինչ աստիճան ուղղամտութիւն կամ տրամաբանութիւն ունի:

Ոմանք շարունակ «Ժողովուրդը» «Ժողովրդէն» «Ժողովուրդով» կ'ըսեն ու յեղյեղեն անդադար, իրր թէ Ժողովը իր բարեկամներն, պաշտօններն ըլլային, բայց արի տես որ Ժողովրդին Հետ այնպիսի անհիմն, խախտու փաստերով կը խօսին՝ իրր թէ Ժողովուրդը ապուշտ Ե. Մ. ՀԱՅԿՈՒՆԻ Նիւ Եորք, 28 Օգոստոս, 98 Ատենակապտ Զ. Բար. Ընկ.

ԲԱՂՈՒԱՍՏ ՈՒՐԻՇ ԹԵՐԹԵՐԻ

Կ. Պօլսի Պատրիարքին փոխանորդ Գարբիէլ ձեւակերտեան վարդապետին եւ Իզմիրի առաջնորդ Ներսէս վարդապետ Ասլանեանին եպիսկոպոս ձեռնադրուելու համար էջմիածին երթալուն հրամանը ելեր է դատական նախարարութեանէն: — Յուլիս 16ին էջմիածին ճանապ ելեր են Մաղաքիա եպիսկոպոս Տէրուհեան եւ Սահակ եպիսկոպոս Ալլատեան. առաջինը նըշանակուած է Թէհրանի և Հնդկաստանի առաջնորդ. իսկ երկրորդը Ատրպատականի:

Վա՛յ քեզ Հնդկաստանի Ժողովուրդ: Հրաշագործ Մկրտիչ եպիսկոպոս բոլոր ազգը տէր տէր վարդապետ ձեռնադրել կը խորհէր՝ երկնից ճամբան մեր առջև Հարթելու համար. այսպէս ալ կը թուի թէ Հայրիկ բոլոր վարդապետներն եպիսկոպոս ձեռնադրելով՝ կը ջանայ գէթ անոնց առջև երկրից փոքր ճամբան մաքրել. իսկ Ժողովուրդը. որ ու Հոգ. Թող ամենն ալ գոթիք երթան:

— Արեւելեան Մամուլի» խմբագրապետ Պ. Մատթէոս Մամուրեան Իզմիրի ազգ. երկուս վարժարանին տնօրէն կարգուեր է:

— Մր. Ալլէն, վանայ ամերիկացի միսիօնարը որ Ամերիկայ կը դառնայ, Հոն Հիմնած է որոսնոց մը, ուր 350 մանչ և աղջիկ որբեր կը խնամուին: Մր. Ալլէն կ'ըսէ թէ յիշեալ տղոց թոյլ կը տրուի ազգ. եկեղեցի յաճախել, եւ Հայ եկեղեցիի Հոգևոր երգեցողութիւնները դաս առնել և կարգալ որբանոցին մէջ:

— Գահիրէի մէջ Պօղոս կարապետեան անուն ազգայինը իր մահու ընէ առաջ իւր 80,000 ոսկիի մօտ Հարսութիւնը ընտանեաց անդամներուն կտակելով 2,000 ոսկիէ աւելի արժէքով կարօտներ յատկացուցեր էր ազգին: Իր երկու փեսաները կը տակին վաւերապատմութիւնը կը ժըխտէին, մինչ որդին Տ. Պետրոս կարապետեան իրը հօր մը վերջին եւ նուիրական կամքը յարգող Հարազատ ազգին իրաւունքը յարգուելու կողմն էր: Դատը տեղի ունեցաւ Յուլիս 20ին Պօլսի առաջ Հիւպատոսարանին մէջ և շահուեցաւ Տ. Պետրոս կարապետեանի կողմէ:

— Նոր Ֆէրէն մը Մարաշի մէջ. տեղւոյն Հայ բողոքականներու ազօթարանին սարկաւազ, կանամբի, շոր ճիւղ գաւակի տէր, պղծագործ Թօր օրու Համբարձում անուն անձը բողոքականաց իզական որոսնոցին մէջ պատասխարուած 11 տարեկան Հայ որբուհի մը բռնաբարեր է: Աս սրիկան ձեռքարկուեր է ու պիտի դատուի:

— Բաղձովէպի մէջ կը կարգանք Հետեւեալները. «Ս. Պապը Հայր Շարմըթեանի յօգուտ Հայոց ըրած երկար ջանքն ու աշխատանքը գովելու եւ վարձատրելու համար՝ օրհնութեան գրով մը առաքելական Եօտարուագ պատուանունը շնորհներ է անոր: Աւագ քահանայապետն կ'ըսէ նամակին մէջ. «Ապահով եղիր որ քու ճարտարութիւնը Հաճոյ եւ գովելի է Մեզ, որ թէթալի սիրով զորոյցաւորեմք Հայոց ազգը»:

ԱՅԻ.

Առաջինայ Շաբաթ երեկոյ (Սեպ. 10) ժամը եօթ ու կէսին, Երեսասարգաց Բրիտանական Ընկերակցութեան սրահին մէջ (23րդ փողոց եւ չորրորդ էջիւ) Ե. Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԱԿԸ իր առաջին Հրատարակարի Ժողովը պիտի ունենայ, որուն մէջ Հրատարակած է Պատ. Յ. Ֆիլեան, որ խօսի Հետեւեալ նիւթին վրայ. «Հայկական խնդիրը և ներկայ եւրոպական քաղաքականութիւնը»:

Նիւ Եորքի բոլոր Հայերը, արք և կանայք, կը հրաւիրուին ներկայ ըլլալ: Ի Դիմաց Ե. Բ. Հայկական Խմբակին ՀէնՐի Տ. ՏԻԳՐԻՍԻ (Գարուղար Ե. Բ. Ը. Ի)

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Անցեալ շաբթու ՏԻԳՐԻՍԻ մէջ կարգաւոր Ուէսթ Զօպօքնի հայ երիտասարդութեան զայրոյթը ներկայացնող ամփոփումն, չը կրցի զսպել ծրիծաղս աս անհեթեթ բողոքը և բողոքներու առջև:

Մեզի հակառակ եղող պարոններն կ'երևի չեն կրցեր գոհացնել իրենց ազգասիրական խանդով բորբոքեալ զգացումներն, ճաշարանի մէջ և փողոցի վրայ մեզի հայհոյելով ամեն տեսակ անվայել խօսքեր և նախատինքներ գործածութեամբ, այժմ ալ սկսած են մամուլի միջոցաւ մեզ հաւածել. ուստի խնդիրն հասած է այն աստիճան ուր համբերութիւնը առաքինութիւն լինելէ կը դադարի. և կը յուսամ թէ իմ կողմէս ալ պարզ իրողութիւնը նշանակող պզտիկ բացատրութիւնն պիտի հաճիք հիւրընկալել ձեր ազատ և ժողովուրդի առջև բաց եղող սխեմաներուն միջոյն մէջ:

Երբ եօթը ամիսներ առաջ եկայ հոս՝ ձերգրի հայ երիտասարդաց երեկոյան դպրոց մը բանալու նպատակաւ, դիմում մը բերելու կառավարութեան հանրագրութեան մը ձեռով որ մեզի սենեակ մը տրուի հասարակաց դպրոցի մէջ և ամսաթոշակ մը որոշուի, ինչպէս կ'ընեն Նիւ Եորք և ուրիշ քաղաքներ. կառավարութեան տուած կէսկտուր և անգահացուցիչ պատասխաններէ չը կրցանք արդիւնք մը հետեցնել:

Տեսնելով երիտասարդաց եռանդուն դպրոց մ'ունենալու և տեղական լեզուն ուսումնասիրելու, խղճացի իրենց վրայ, և չ'ուզելով անցնել երթալ՝ թողնելով զիրենք այդ ողորմելի կացութեան մէջ, իրենց հաւանութեամբ (15 հատի ներկայութեամբ) ներկայացուցի այս արգար և կարևոր պահանջումն Ա. երիցական եկեղեցւոյն ի Ուէսթ Զօպօքնի. մեր աղերսը ընդունուեցաւ սա պայմանաւ թէ կիրառուեալ ժողով մ'ես ունենանք: Ես ալ ինկատ առնելով 300ի մօտ հայոց հոս բնակիլը՝ առանց ո՛ր և է կանոնաւոր կիրառուեալ ժողով մ'ունենալու, սոյն առաջարկութիւնը ինձ ալ յարմար թուեցաւ, և Գրիտտոնեական երիտասարդաց ընկերութեանց ուղղութիւնը ունեցող կաղմակերպութիւն մը հաստատելով՝ սկիզբէ կ'վեր սկսանք մեզի յատկացեալ ժողովարանի մէջ գրուել մը Աւետարան կարգաւոր մը ալ և ալ գիտական և բարոյական նիւթերու վրայ խորհրդածութիւններ աւանդել և դասախօսութիւններ ընել շարաթր շորս գիշերներ՝ հասարակաց դպրոցի մէջ:

Թէ և մեր Աւետարանը ներս բերուած էր թուրքերու մէջ փաթեթուած, սակայն անմիջապէս իւր պատեանէն մերկուելով՝ սկսած էր փայլել սեղանի վրայ 7 ամիսներէ հետէ իւր սոսկիզօծ եզրերով:

Երիտասարդութիւնը փափաք յայտնեց զինավարժութիւն սովորիլ, մենք ալ առաջնորդեցինք վերայիշեալ եկեղեցիի մատարան, ուր «Գունդ Տղայոց» անուն վաշտ մը կը մարզուի ձրի, որոնք սոյն եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի աշակերտներ են, մեր պարոններն ալ միևնոյնը ուզեցին և ըրին. քիչ վերջ գանգաւոր ձայներ սկսան բարձրանալ թէ՛ կիրակնօրեայ դպրոցը շատ հեռի է. և եթէ կիրակնօրեայ դասը հողի մէջ տրուի աւելի աշէկ կ'ըլլայ. մենք ալ այդպէս ըրինք և բնականաբար մեր սովորական ժողովին աւելցուցինք կիրակնօրեայ դաս մ'ես, և երեք ամիսներէ ի վեր կը շարունակէինք. չեմ գիտեր թէ որ հովը փչեց. երկու շաբաթ առաջ մեր ժողովարանը կարգ մը երիտասարդք այցելեցին, որոնց-

մէ ոմանք երէք Պմեզ հետ յարաբերութիւն չունեցած, ոմանք ալ շատ քիչ անգամներ մեր մէջ գտնուած էին. այս նորեկներն ներսէն մի քանիներու հետ միանալով՝ սկսան երկարօրէն դիտողութեան և քննադատութեանց, և ստիպեցին մեզ հրապարակաւ խօսիլ թէ «Այն որ եղած էն գոհ չէ՝ թող չը շարունակէ»:

Մենք ալ ամեն տեսակ հակառակութիւն և քննադատութիւններէ ազատ մնալու համար, սկսած ենք այժմ երկու շաբաթէ ի վեր ըստ Աւետարանական եկեղեցիի օրինացն պաշտամունք կատարել. և ունիմք 50ի մօտ ժողովուրդ:

Ուստի ո՛վ զիս հաւածող սիրելի հայրենակիցներս, ձեր քունը չը փախչի գիշերը, քան զի ձեր սիրելի երիտասարդութիւնը այլևս կիրակիներն մեր հօլը չի գար, այլ ամփոփուած է ճաշարանի անկիւնը, ուր երգերու տեղ տաճկական խաղեր կը տրի և Աւետարանի տեղ պիտի կը մատակարարուի: Իմ Աւետարանս մտիկ ընելու եկող ժողովուրդն այնպիսի ընտանիք և անձերէ կը բաղկանայ, որոնք մեր արժէքը կրնան գնահատել և սիրով կը յաճախեն իմ ժողովարանը, ուր ամեն բան աւետարանական և հայկական է:

Աւետարանիչն ի Ուէսթ Զօպօքնի ՅԱՐՈՒԹԻՒՆ Յ. ԹՈՒՄԱՅԵԱՆ

ՍԷՆՏՐԸԼ ԾՈԼՍԻ ԶԱՅՈՑ ՍԵՒ ԿՈՂՄԸ

Աղբի և կրօնի ուրացութիւն, գողութիւն, մատնութիւն և աւելի ծանրակշիռ ութիւններ անսվոր չեն Ամերիկայի գաղթականութեան մէջ: Հոս ի ՍԷՆՏՐԸԼ Ծօր 70ի շափ հայրերուն, որոց մէկ մեծ մասը վարակուած է պէս պէս ախտերով... Գողութիւն ընել, իրարու բնակավայր կրակի տալ, կռիւ ընել, ծեծկուել, դատարան դիմել, կաշառատուութիւն, ապօրինի կենակցութիւն և այլն սովորական բաներ գարձեր են տեղւոյն հայոց մէջ: Իբր օրինակ մի քանի դէպքեր յիշեմ, որոց հրապարակ ելնելը թերևս ուրիշներու դաս մ'ըլլայ:

Սորոցրի Ս. Կ. անուն անձը մօտ 50 տարեկան մարդ մ'է՝ ամենէ ծեր հայը տեղւոյն գաղթականութեան մէջ: Սա իր երիտասարդութեան ժամանակէն սկսեալ ինքզինքն զինեմուրութեան ու անոր հետեանց զոհ սուած է, կ'ըսուի թէ ՄԷՂԸԻ մէջ իր շահած բոլոր դրամն օղիի կը յատկացնէ եղեր իր ընտանիքն լքանելով բոլորովին: Ս. Ամերիկայ գաղով ինքզինքը չի փոխեր, այլ աւելի կը յառաջադրուի իր ճամբուն մէջ... 8-9 տարիներէ ի վեր իր բոլոր շահը խմելիքի տուած է. և ոչ ոք զիտէ թէ ինչ վիճակ ունի իւր ընտանիքը:

Բէստիկցի Գ. Գ. ուրիշ արատ մ'է մեր գաղութի մէջ. անբարոյակամութեան գագաթնակէտին հասած է արդէն այս անձ. զեռ վերջերս յիշեալ Ս. Կ. ի հետ ամօթալից կռիւ մ'ունեցաւ սա զինետան մը մէջ՝ լրբուհիի մը պատճառաւ... խնդիրն դատարան գնաց ու յանցաւորներն տուգանք վճարելով ազատեցան. բայց հայ անուան վրայ եկած արատը ինչով կրնար մաքրուիլ:

Վարդապետի Ն. Պ. անբարոյակամութեան ուրիշ տիպար մ'է. հակառակ բարեկամաց և իր Պօթնի մէջ բնակող ազգականաց իրատեսներուն, այս անձ կը շարունակէ կենակցիլ օտարուհիի մը հետ...:

Ատոնց պէս դեռ շատեր կան հոս, և ցաւալին է որ երթալով կը բաշտմատակութիւն ինչ ընելու է երիտասարդութիւնն ազատուող համար այսպիսեաց սոսկալի որոգայթներէն ու ընկերութենէն... * * *

Նիւ Պրիթըն, Օգոստոս 25.

«Կողքին վրայ ինկած մանկան երևի ճանճերը ո՛վ պէտք է քշէ», կը հարցնէր Անահիտ ՏԻԳՐԻՍԻ վերջի թուին մէջ՝ քաղաքիս նորակազմ գրադարանի միութիւնն նմանցնելով այդ «կողքին վրայ ինկած մանկան»: Ի պատասխանի ըսելու ենք Պ. յոգևածագրին թէ՛ մեր ամենուս պարտականութիւնն է «այդ ճանճերն» քշել: Պ. Անահիտ, պարտինք յառաջդիմել այժմ, զի մեզ շրջապատող յառաջդիմած են շատ, ու կը յառաջդիմեն ամեն օր: Գաղաքակրթութեան գետին մէջ պիտի խեղդուինք՝ եթէ չի կարենանք յառաջ վազել. և այս ընելու համար կազմակերպութիւններ ունենալու ենք: Կազմակերպութիւնն կ'ըլլայ ինձմով և քեզմով. ուստի երբ կը տեսնես որ «այդ մանուկն ճանճերու կեր կ'ըլլայ», փոխանակ ուրիշն օգնութիւնը ծաղրելու, հասի՛ր և դուն ազատէ զայն: Ժիշդ հիմայ Նիւ Պրիթընի մէջ այսպիսի մանուկ մը կայ. հասի՛ր և ազատէ զայն, փոխանակ ծաղրելու զմեզ: Ա.

Մ Ա Ն Գ Ո Ց Ժ

Լրագիրս մամուլ զրկուած պահուն Պօթնիէ բոթարեր նամակ մը ստացանք, որ կը գուժէ թէ Սեպտեմբեր 2-ից կ'ազատուի Պ. ՍՏՖԱՆ ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ (Մուշէղ), որ ծանօթ է մեր ընթերցողաց Ս. Հրցրի անունով, իւր մահկանացուն կնքեր է ի հասակի 30 ամաց:

Մ Ա Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Ք

Կարապետ Մ. Պ. Մուրատեան, որ ընտանեօք հանգերձ Նէշուէ կը բնակէր, յետ երկարատե հիւանդութեան մահկանացուն կնքեց Օգ. 31ին Հանգուցեալը Սուլթուի Հայ Բողոքական դպրոցին կտակած է 300 տոլար:

—Ցաւ ի սիրտ կը տեղեկանանք որ ձամայիքս Փէյնի թիւ 7 Բլանթ փողոցի հայոց ճաշարանի մէջ, երկարատեներէ ի վեր մեր հայրենակիցք երեկոներն շէքերն դաշերն ու պատուհանները ամուր մը գոցած՝ թղթախաղով (խուճար) կը պարապին: Հարկ չէ ըսել թէ ո՛ր աստիճանի վնասակար սովորութիւն է այս, և ո՛ր աստիճանի վտանգաւոր: Եթէ տեղական կառավարութիւնն մի անգամ այդ խաղամոլաց օձիքն ձեռք անցունէ, յանցաւորներն դիւրութեամբ պիտի չի կրնան երկարատե բանտարկութենէ խուսափիլ:

—Մեր Երեւոյի թղթակիցը կը գրէ մեզ թէ Տ. Մաշթոյ վարդապետ Օգոստոս 28ին Ս. Պատարագ մատուցեց 5 տեղւոյն Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ ինքնակալութեան խուճն բազմութեան, ու այդ առթիւ մ'կըրտած է տեղւոյն պաշտօնի գործարանատիրոջ Չաքարեան Մանուկի երկու գաւազները ու Չ. Մուրատեանի դուստրը: Երեւոյի հայերն միացած վօքիկանի, շէմընի, Ուէսթ Քոլեճիէն, Թէսիի և Միլվօքիի հայոց՝ կ'աշխատին Մաշթոյ վարդապետն մը նայուն հովիւ պահել, և այս առթիւ հանգանակութիւն մը ձեռնարկած են արդէն: «Մօտ օրէն, կը յաւելու թղթակիցը, կը բացուի որբերու համար հանգանակութիւն մը, որոյ մասին կը յուսանք Արևմտեան Հայեր՝ Արևելքի մէջ գտնուող եղբարց չափ աստատձեռն պիտի ըլլան, որպէս ապացուցած են յանցելու մնալ:

—Եփրատ չի հրատարակուեցաւ անցեալ շաբթու. բայց կը լսենք թէ երկու շաբաթէն ընդարձակ և պատկերազարդ լոյս պիտի տեսնէ:

—Համատէն կը գրեն մեզ «Տեղւոյն գաղութն ալ սկսեց տակաւ առ տակաւ մէկիւրի ձգել իր հակամարդկային ընթացքը. քանիներ» որք բաղդախաղի մոլիները գարձեր էին, այսօր ձգեր են այդ անարդ գործը:

Բերրիցի այն երիտասարդներն, որք տարիներէ հետէ իրարու դէմ զինուած էին՝ հաշտուած են այժմ, և այս հաշտութենէն շատ արտի օգտուի իրենց ուսումնասիրաց ընկերութիւնն: Աչքի լոյս կը մաղթեմ այս ընկերութեան մասնաճիւղերուն, զի մեռեալ քոյրերին յարութիւն առաւ:

—Նոյն թղթակիցը կ'ըսէ թէ տեղւոյն բերրիցիներէն պարոնայք Անթառամեան, Տէմիրճեան և Յարութեան Չիքակոյի մէջ գործելէ զատ, լուսանկարչութեան գործ մը հաստատած են ի ձամմընս:

—Ուսթըրի Տէր Գասպար քահանան իւր ստանալիք թոշակի մասին չ'կըրնալով համաձայնիլ տեղւոյն Հոգաբարձութեան հետ, հրաժարած ու Պօթնի գնացած է:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԻՄԱԿԱՒՈՐՆԵՐ

Գրեց Յ. Կ. Ճանկիւլեան

Եգիպտոս

Գին չի կայ. փափաքողներն կըրնան ձրիարար ստանալ հեղինակին դիմելով. Փօսթ Բէսթմանթ, Ալէքսանդրիա:

«ՏՆը Արմինիւն» ին աճը Փասթ

անտ փրէզէնթ»

Գրեց Արամ Զ. Բրուտեան

Լօս Անճէլէս, Գալիֆօրնիա.

Անգլիերէն լեզուաւ գրուած գրքը յոյ մ'է այս 80 էրեսներով, որ քար մեր լեզուի, գրականութեան ու պատմութեան վերաբերեալ քանի մը գիտելիքներէ կը պարունակէ երկու ողբերգութիւններ. մին՝ «Թագաւորութիւն Հայաստանայց» Արակ Բ. ի ժամանակներէն, իսկ միւսն՝ «Թըրքաց եղեռներն», կամ Հայկական Կոտորածներ» ժամանակակից դէպքերէ քաղուած:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՈՒ ԹՈՒՐԲԸ

(Վէպիկ)

(Շարունակութիւն անցեալ թուէն)

«Ես հաղթաթի էլ հայեաթ, Մուհամմէտի սալավաթ» կ'ըսէր իւր սուր կը քաշէր, Չանոնը մէկէն կը տաշէր, Որպէս զի ապագային երբ մարդ դառնար իւր գլխին, Լաւ ուսած ըլլար իւր դաս— Հայոց ըլլալ պատուհաս:

Երբ մի օր այսպէս փոքրիկ ոճրագործ, իւր աննկին մէջ նստած էր անգործ, Յանկարձ հոն տեսաւ ինքնակոչ գող մը, Որ միշտ յօժար էր վեր առնուլ բան մը: Այս գողը մարդ չէր, բայց տնեցի էր Փայլուն աչերով, երկչուտ մ'կնակ մ'էր, Որ իւր սպիտակ սուր կաւաններով նախաճաշիկ մը հոն առնել կ'ուզէր: Թէ և մ'կնակին գնչիկ մը շատ էր, Բայց Օմման շուքեց զայն հիւրընկալեւր. Չար կատուի մը պէս խիտտ արագաշարժ Մուկն ձեռքին մէջ բռնա էր անշարժ: Նա գերիին հետ այնպէս վարուեցաւ, Որոյ նմանը հիշ չ'իմացուեցաւ. Մըծումը թեւերէ մոմեր պատրաստեց, Մկան ոտքերուն ու պոչին կապեց: Դիւրամառ կազով լաւ մը օժիւղով թեւերու ծայրերն հաղի թէ վառեց, Հեռուն քաշուեցաւ այս քայն Արգիւլէս Տեսնել իւր խեղճուկ զոհի ողջակէզ, Որ տաքէն լոյսէն սաստիկ շուարած, Կրակներու մէջ կուռուղ էր թողուած. Մուկը իւր վերջի ճիգը հաւաքեց, Հոն՝ մի տակառի մէջ հազիւ ցտակեց. Բայց ինչ սոսկալի դէպք պատահեցաւ, ... Տակառի վառողն մէկէն պայթեցաւ. Կողպուտներով ճիւղացեալ տունը, Չար Օմմանին հետ օդը բարձրացաւ:

Պ. Ապու-իւլ-գառըր արշաւանքի էր գնացած, Երբ իւր տան մէջ պատահեցաւ այս դիպուած. Նա այն օրը այնչափ սոսկամար լեցուած էր, Որ նոյն իր իսկ երազին մէջ տեսած չէր. Որովհետեւ նա այս անգամ յաղթող չէր, Կողպուտներ հետը առած չէր գարձեր. Նաև այնչափ վէրք ստացած էր կուրճերն, Չար հաղիլ թէ սայլին բառացած տուն բերին: (Շարունակելի)

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ՏԻԳՐԻՍԻ

Պօսթոն — Ղազար Տէր Մանուէլեան
Փրօփիտէնս — Նազարէթ Թաթէսեան
Լօրէնս — Ս. Պօյաճեան
Մօլթոն — Ա. Մեծատուրեան
Ուէսթ Զօպօքըն — Յ. Աշճեան
Հապլըհիլ — Տ. Մուրատեան
Յրէզնօ — Յ. Մ. Նշիկեան
Պրայթըն — Մ. Գալուստեան
Ուսթըր — Յ. Բարակեան
Լին — Չ. Կ. Պէրպէրեան
Հըստըն — Գ. Պալթայեան
Սէլիս — Չ. Կօչկարեան
Յիչպըրկ — Ս. Հինթլեան
Նաշուէ — Պ. Պրօքաքեան
Մանչէսթըր — Մինաս Արոյեան
Յօլ Բիլլըր — Ս. Պ. Միհրան
Թրոյ — Մ. Կ. Հայրապետեան
Ըսթամօքըր — Ղ. Բուզոյեան

ՏՕԲԹԵՐՈՒ Ս. Յ. ԳԸԼԸՃՃԵԱՆ,
Բժիշկ և վիրարոյժ,
314 Եօմըթ Ալիու, Իւնիքն փառքին
առջև, Պօսթըն, Մասս.
Հիւանդ կընդունի առաւօտեան
ժամը 8է ց10. կէս օրէ վերջ՝ ժամը
2է ց4. Իսկ երեկոյ՝ 6է մինչև 8:
Կարօտ հայերն ձրի կը դարման.
ուին կէսօրէ վերջ ժամը 2է մինչ 4:
—Թէլէֆօն. 840 Թրէմօնթ— 4


ՊԵՏՐՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՅՈՎ.
Հ Ա Ն Ն Է Ս Փ Ա Ս Բ Ա Լ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ
Թիւ 154 Իսթ 27րդ փողոց, Նիւ Եորք
Նոր կարգադրութիւն, Նոր
վարձութիւն և Նոր ծաշարան
Պատիւ ունին ծանուցանել հասարակութեան թէ ամոռոյ 7էն սկսեալ
գնած ու բոլորովին կերպարանափոխ
րրած են այս ծաշարանն ներքին վարչութեան տեսակաւ: Խնայարարութիւնն, մաքրութիւնն, գործածուած թարմ մսի և նպարեղէններու առասկան լատան են թէ պիտի գնահատուի ընդհանուր ժողովրդէն. բայց վստահ ըլլալու համար թէ ամեն ինչ առաջնակարգ և գոհացուցիչ է այս ծաշարանի մէջ, կը հրահրուին ազգայինք փորձել գէթ մի անգամ:
Եկէք և տեսէք: 4-5

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՐ
Քանիցս պատահած է որ մեր ազգայիններէ ոմանք իրենց նորածին երեխայն կիրակի օր կեղեցիկ քնքած են յանկարծ միջոցով մտայն կամար: Եւ որովհետեւ այդօրինակ գոխուհիներ կանայ անպատահելի թիւերով, կը խնդրուի ծնողներէ, որ երբ նորածին ծագել, կը փորձուին, գէթ երեք օր առաջ կոմիսիոն լուր տան իր փորձութեան Առեւտրային Ս. Յ. Փալանճեանի: Ինչպէս 348 Պրօսթըն և կամ Ալթ. Խաչ փողոցայիններ, 154 Իսթ, 27րդ փողոց:
Իսկ Պատիւ կոմիսիոն կամար գանձ 15 օր առաջ Ս. Յ. Պատիւ կոմիսիոն լուր տան անհրաժեշտ է:
Երբ կեղեցիկ պատահելից լուր տան անհրաժեշտ է:
1894. ՀՈՒՄԱՆԻՏԱՐԻՍԻ

AMIN MERHIGE & Co.
29 BROADWAY, NEW YORK, Room 212
ՄԵՆՈՒՐԱՆԱԿ (Հօրէյլ) ՎԱՃԱՒԱԿԱՆՔ
Արեւելեան և Տաճկաստան Ապրանայ
Այս փածոտանն իր անասկին մէջ լաւեմտեմունք է ինչիւ Եորք: Հոն կը վաճառուին ամեն տեսակ տանկանազօրներ, սեղանի, մէլիքի, փիւնայի ևն. մետաքսեայ և ոսկեթել ծածկուիներ, Գամասկոսի վարագոյրներ, Բերթայի աղապանի, քէֆուս, ևն. ևն.
Հայ վաճառականք կը հրահրուին փորձել միանգամ: Արիջ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գընորն չափաւոր և ապրանքներն լատացայն ինքնով՝ ուրիշ ո՛ր և է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ:

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒՄ ՄԵՍԱԳՈՅՆ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

Շարժական վճարելով կը առնի տեղ ի Մուրէյ Հիլ Փարք, որ Մեծագոյն Նիւ Եորքի աշխարհագրական կեդրոնն է Ֆլըշինկի կից: Սա տեղը ծովի մակերեսէն 120 ոտք բարձրութիւն ունի, ուր Յէրզ փողոցի Ֆէրրիէն Հինգ սէնթով կերթցուի 19 րոպէէն:
\$1.00
Մէկ տղար բնաս գնել մի առնի տեղ ի Մուրէյ Հիլ Փարք, որ Մեծագոյն Նիւ Եորքի աշխարհագրական կեդրոնն է Ֆլըշինկի կից: Սա տեղը ծովի մակերեսէն 120 ոտք բարձրութիւն ունի, ուր Յէրզ փողոցի Ֆէրրիէն Հինգ սէնթով կերթցուի 19 րոպէէն:




Նախկին թեան յարմար վայր Հիլ Փարք, ստեղծարարը բոլոր հրատարակչական հարցերէ անգամ հաճի վայր: Կան Հիւսարակաց և Ղապոնցի, ևն.
Այս Հողերը տեսնել փափաքողներուն երթեկուցութեան համար ձրի տոմս կը տրուի: Երթալ ուղղորդող ամեն Հինգ-շարժի և Կիրակի օրեր, կէս օրէ վերջ ժամը մէկ ու կէսին, ներկայ գտնուելու են Լօնկ Ապլընթի Ֆէրրիէն առջև, Իսթ 34րդ փողոց, ուր պիտի կրնան տոմս ստանալ Տ. Ս. Եարտըմեանէ, որոյ Հասցէն է 298 Ուէսթ 12րդ փողոց:
Հէնրի Բլեւս կ'ըսէ երկիր գնելու մասին իմաստուն եղի՛ր քանի որ առիթ մը կայ ձեռքդ, դրամդ Նիւ Եորքի մօտ աղէկ հաստատուն կալուածներու համար ծախսէ, ուր ժողովուրդը որ երթալով կ'աճի, քիչ առնէն պէտք պիտենանայ քո կալուածներուդ, որուն համար բարձր գններ պիտի վճարէ:
MARK C. MEAGHER,
St. Paul Building, No. 220 Broadway, New York City.

IS. B. KRONBERGER, M. D. PH. G.
OFFICE 141 GREEN STREET, WORCESTER, MASS.
(Կը խօսուի զաղիերէն, իտալերէն, յունարէն, տաճկերէն, քուրդերէն, սպանիերէն, փրանցիերէն, ռուսականերէն և փորթուգիզերէն լեզուներով)
Մասնագէտ արտոյց յատուկ ամեն տեսակի և ատիճանի հիւանդութեանց, որք յառաջ կուգան նախնական անհոգութենէ. յօդապաւի, մարմնի հիւանդութեանց, անմարտուելեան, թոքախտի, պնդութեան, ախտափոխ կորուստի ևն. ևն.: Հիւանդութիւններ կը դարմանուին թղթակցութեամբ: Թղթակցութիւններ կրնան կատարուիլ հայերէն լեզուով: Միակեղ նահանգաց ամեն կողմերէն հողարէ տեղի հայերէ վկայութիւններ ունիմ: Ամերիկացի բժիշկներ տանոյմէ ձեռք քաշելէ վերջ, ես դարմանած եմ զիրենք:
Իմ հիւանդներն ինձմէ ձրիարար զեղ կատանան, զոր ուղղակի Եւրոպայէ բերել կուտամ: Գրէ ինձ հիւանդութիւնդ որ պատասխանեմ թէ որչափ շուտ կրնաս դարմանուի:
Յարգանք ՏԲԹ. Ի. Պ. ԲԲՈՒՊԵՐԿԸՐ


ՊՈՒԼՂՈՒՐԻ ՄԵՍԵՆԱԼ ԸՆԿԵՐՈՒԹ.
BULGUR MANUFACTURING CO.,
No. 161 Union Street, Worcester, Mass.
Պատիւ ունին ծանուցանել թէ 3-4 տարիներէ Վեր մասնաւոր գործարան մը հաստատած են պուլըուր, ձեւած և կորկոտ պարտասեղու համար: Հոս շինուած ապրանքներն ուրիշ իններուն նման ո՛չ անարտօք հոս կը բուրեն և ոչ քարի կտորներ կը պարունակեն: Երկար փորձառութիւնը, ընտրի գործիքներն ու ցորենի ընտրութիւնն զլիւս որ պատճառներն են, որք այս գործարանի պարտասուութիւններն հանրածանօթ ըրած են հրապարակի վրայ:
Այս առիթը զգուշացնելու ենք ժողովուրդը մեր անունն շահագործող կարգ մը անձանց արտադրած պուլկուր գնելէ: Բանինքն արդէն միամտաբար խարուած են ասոնցմէ իրենց գնած պուլկուրը ետ տալով: Պուլկուրի Միացեալ ընկերութիւնը իր շահ ժողովրդի շահուն ու գոհունակութեան մէջ կը փնտռէ. և պատասխանատու է իր վաճառածներուն: Պուլկուրի այժմեան գինն է 3½ սէնթ լիպրան խանութներու և ճաշարաններու համար, տուններու համար՝ 4 սէնթ: Փոխադրութեան ծախքը գընողին վրայ է: Մեծ քանակութեամբ գնողներուն համար մասնաւոր զեղ կը ըլլայ: Եւրոպայէ գնողները ճշտի կը կատարուին: Առեւտուրը կանխիկ է միշտ:

Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ,
ԿՕՇԿԱՎԱՃԱՒ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ,
Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք
Այս խանութին մէջ կը վաճառուին ամեն տեսակ կօշիկներ իրատ ածան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապսպրուած կօշիկներ կը կարենք ձեւաւոր և վստիւշ կերպով: Կը նորոգենք հին կօշիկներ շափաւոր գներով: Ուրիշի մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. և վստահ եղիք որ շատ գո՛չ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց
Արանց կօշիկներ \$1.25է մինչև \$5.00
Կանանց « \$1.25 « \$2.50
Տղայաց և աղջկանց կօշիկներ \$0.50 « \$1.50
Ե. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,
Թիւ 628 Յրդ Ալիու, Նիւ Եորք:
Կը ծանուցանէ թէ, իբր ներկայացուցիչ համառաւոր մի վաճառատան,
Կարող է ծախել ամեն տեսակ հեծեկաններ խոստ ածան գներով: Գնել փափաքողք եկէ՛ք իրեն գիմեն գո՛չ կը մնան միշտ:



Հ Ի Ր Չ Օ Լ Ա
ՄԱՋԻ ԴԵԿ

HIRSOLA
A HAIR FOOD
FEEDS, STRENGTHENS, CLEANS AND ADORN THE HAIR, DESTROYS ALL DISEASES OF THE SCALP AND REMOVES DANDRUFF.
IF NEVER FALLS!
Because it is not a mere mixture of oil and water, but a solution of ingredients of Chemicals, which nature has concentrated to be safe, sure and beneficial.
H. KOORIE & CO., New York.
Պատիւ ունին ծանուցանել արգ. հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ միայն փորձուող և անխաղախ են, այլ և զբուրմատու լի են ամէն գասակարգի անձանց:
Այս վաճառատան մէջ կը ձուլուին Եւրոպայեան, սեղակաւ, Գալլիֆորնիայի և տաճկական ամէն տեսակ ուրախ, օղի, գինի, շամբանի, մասթիքայ, դարձուր, պրանտի, ախիլի և այլն, իրենց ամեն տեսակներով:
Փափաքողաց գներու ցուցակը զրկուի առանց ո՛ր և է ծախքի:
Եւրոպայէ գները կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ և փութով: Գաղաքին մէջ ապրանքներն ձրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է:
Ըմպելիքներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօրէյլ անտրիթէյլ)
Մեր յաճախողքը երբ չի հաւանի իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կատենք զայն փոխով, եթէ պատճառ ու փաստած չըլլան:
Ըմպելիքներ կը վաճառուին չիչօղ, կայրով, ապառով և յատուկ անուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր:
Դիմել յիւեալ հասցէին կամ
Ե. Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ,
535 ՈՒԷՍԹ 57րդ փողոց, Ն. Ե.
Ե. ԹԱԿԱԿԱՆԱՆ



ՅԱԿՈՒ Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ
(Ներկայացուցիչ)
ՈՒԷՍԹ Գ. ԲԵՆԸԼԸՐ ԵՒ
Ե. Բ. Ա. Ր. Յ.
Վ Ա Ճ Ա Ո Ա Կ Ա Ն Բ
Գինի, Օղի, Օղի, Բմպելիք
Թիւ 202, 204 Իսթ 29րդ փողոց
ՆԻՒ ԵՈՐՔ, Ն. Ե.

Պատիւ ունին ծանուցանել թէ, այս նոր ծաշարանն ըստ ամեն իմաստով լի է մարտութիւն և բնօրին խոհարարութիւն միշտ կը գնահատուի հասարակութեան կողմէ:
Միանգամ փորձելու թաւական է մշտնջենական յաճախողը ըլլալու:
Թիւ 242 Իսթ, 41րդ փողոց